ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ

Ի ԳՐՉԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԱՌԱՔԵԼԻ ԴԱՎՐԻԺԵՑԻՈՑ

1445· Այս Գրիգորն (Մակուեցի, կաթողիկոս) գրեաց ի Կամենից, թվ· ՊՂԴ, և զՍէչով ստորագրեալ Լովայ արքեպիսկոպոսին։

1626· ՌՀԵ· Մելքիսեթ կաթողիկոսն յետ օրհնելոյն զՆիկոլ պարոնտէրն, զկնի սուղ ինչ աւուրց գայ ի քաղաքն Կամենից, և կեցեալ սակաւ աւուրս՝ հիւանդացեալ մեռաւ, ի Ծաղկազարդի շաբաթ օրն· ՌՀԵ·

1627· Յետ ամաց ինչ դէպ եղեւ Նիկոլ պարոնտիրին գալ ի Կամենից և օրհնել զԽաչգօ սարկաւագն՝ քահանայ փոխ· Օնոփրիոս և Կեսարացի Գրիգոր վարդապետին (զորմէ ի վերոյ բան ինչ ասացաք)· հանդիպիլ եւս ի Կամենից։ Նիկոլ պարոնտէրն յետ երկուց շաբաթուց՝ կամեցաւ զի Նորընծայն զառաջին պատարագն ասէր· և հրաւիրեաց առ այս և զԳրիգորն· և զի սա ոչ հաճեցաւ, լռեաց եւս շաբաթ մի, և յաւել հրաւիրել զվարդապետն· և սա կրկին դժկամակեցաւ, ասելով, թէ չէ օրէն նախ քան զքառասունն։ Վասն որոյ բարկացեալ Նիկոլին՝ փակեաց զեկեղեցին՝ ուր էրն Գրիգոր, և զնորընծայն ետ պատարագել յաւագ եկեղեցին, ուր էր ինքն։ Յորոյ վերայ յոյժ վշտացեալ Գրիգոր՝ նզովեաց զվշտացողն յայն եկեղեցին։ Իսկ եպիսկոպոսն յետ պատարագին՝ փակեաց և զիւր տեղոյ եկեղեցին· և մնացին երկու եկեղեցիքն փակեալք յաւուրս աւագ տօնիցն։ Ապա խնդրեաց զքաղաքապետն՝ ոչ տալ թոյլ Գրիգորի գալ ի Լով, այլ զի յետս դարձուցէ զնա· որ իսկոյն հրամայեաց զնա ունել՝ իբր ի դիպահոլ լրտես ի Թուրքաց· բայց իմացեալ զանմեղութիւն նորա՝ թոյլ ետ դառնալ յերկիրն իւր։ Որ ժամանեալ ի Բուղտան՝ նզովս առաքեաց ի վերայ Նիկոլին· և նա անհոգս կայր ի կողմանէ բանադրանացն· բայց ժողովուրդքն յոյժ ներհականային նմա՝ առաւել քան զառաջն՝ վասն այսմ իրի։

1652· Հռչակեալ համբաւ իմաստութեան և սրբութեան հայրապետիս (Փիլիպպոսի) ընդ ամենայն երկիր, եհաս և ի քաղաքն Լով· ի սոյն ժամանակի բազմահնար եպիսկոպոսն Նիկոլ՝ նկատեալ թէ ոչ լինի խաղաղութիւն ի մէջ